ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի թիվ 91 դպրոցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառու կազմակերպության գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 16.02.2018թ. կնքված N 1 համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնա-ժամկետի երկարաձգում:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

22.09.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7 գնման պայմանագրի

ք. Երևան 27.10.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի թիվ 91 դպրոցի վերանորոգման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 22.09.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 16.02.2018թ. կնքված N1 համաձայնագրի հավելված N1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի 4-րդ տողում <<31.10.2018թ.>> բառերը փոխարինել <<30.11.2018թ.>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011906
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զանգված, 20/53
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968

Տնօրեն՝

---------- Մ. Միսակյան
(ստորագրություն)
Կ.Տ.